

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության,

սոցիոլոգիայի և իրավունքի

ինստիտուտի տնօրեն,

իրավաբանական գիտությունների

թեկնածու՝ Լ.Ա. Նազանջյան



«26» օգոստոսի, 2020թ.

**ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐԾԻՔԸ**

*Րաֆֆի Գազիկի Նալչաջյանի*

*«Պետական ֆինանսական վերահսկողություն իրականացնող մարմինների իրավական կարգավիճակի առանձնահատկությունները Հայաստանի Հանրապետությունում» թեմայով ԺԲ.00.02 – «Հանրային իրավունք՝ սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված արեւնախոսության վերաբերյալ*

Գրախոսվող թեկնածուական ատենախոսությունը նվիրված է պետական ֆինանսական վերահսկողության հասկացության բովանդակության բացահայտմանը, դրա խնդիրների և տեսակների ուսումնասիրությանը, ինչպես նաև պետական ֆինանսական վերահսկողություն իրականացնող մարմինների իրավական կարգավիճակից բխող առանձնահատկությունների վերլուծությանը:

Ատենախոսը փորձ է կատարել մշակել գիտական այնպիսի աշխատանք, որն, ըստ էության, կհանդիսանա ուսումնասիրվող թեմայի վերաբերյալ հանրապետությունում առաջին համապարփակ հետազոտությունը:

Հայցորդի ատենախոսության ուսումնասիրության առարկան են հանդիսանում այն հասարակական հարաբերությունները, որոնք ուղղված են պետական ֆինանսական վերահսկողություն իրականացնող մարմինների կողմից ֆինանսական վերահսկողության իրականացման տեսական, մեթոդական, կազմակերպատիրավական և գործնական ասպեկտներին:

Ընտրված հետազոտության թեմայի արդիականությունը պայմանավորված է նրանով, որ նախ, պետական ֆինանսական վերահսկողությունը հանդիսանում է ֆինանսատիրավական քաղաքականության իրականացման հիմնական միջոցներից և ֆինանսական

համակարգի ամենակարևոր լծակներից մեկը, որի նշանակությունը կայանում է ֆինանսական ուժգնավարության և մեթոդաբանության համակցված կենսագործմանը և ֆինանսական ռեսուրսների նպատակային ու արդյունավետ բաշխմանը և օգտագործմանը, ինչպես նաև հնարավորություններ են ստեղծվում ֆինանսաբյուջետային բնույթի խախտումները կանխարգելելու, պետական միջոցների անարդյունավետ կամ ոչ նպատակային օգտագործումը կանխելու համար:

Թեմայի արդիականությունը պայմանավորված է նաև պետական վերահսկողություն իրականացնող մարմինների կողմից վերահսկողական գործառույթների և կառուցակարգերի որակական փոփոխությունների վերաբերյալ գիտական հարթության վրա համալիր առաջարկությունների ներկայացմամբ՝ վերահսկողության կազմակերպման և իրականացման իրավական կարգավորման հիմնախնդրի տեսագործնական նշանակության, ինչպես նաև նրանով, որ գիտատեսական հարթության վրա համալիր և համակողմանի վերլուծության նյութ դեռևս չեն դարձել նաև ՀՀ Ազգային ժողովը և Հաշվեքննիչ պալատը՝ որպես պետական ֆինանսական վերահսկողություն իրականացնող մարմիններ արդի սահմանադրաիրավական բարեփոխումների խորապատկերում: Հեղինակը վերը նշված հարցերի հետազոտման կապակցությամբ առատորեն ուսումնասիրության է ենթարկել տարբեր պետությունների օրենսդրական մոտեցումները՝ տալով իրավահամեմատական վերլուծություններ:

Հետազոտության արդյունքները կարող են տեսական հիմք հանդիսանալ պետական ֆինանսական վերահսկողություն իրականացնող մարմինների իրավական կարգավիճակի հետագա գիտական հետազոտությունների համար: Ատենախոսության մեջ ներկայացված մոտեցումներն ու կատարված հետազոտության արդյունքների վրա հիմնված առաջարկությունները կարող են օգտագործվել պետական ֆինանսական վերահսկողություն իրականացնող մարմինների վերաբերյալ օրենսդրության կատարելագործման, գիտական և ուսումնական գրականության նախապատրաստման նպատակներով. «ՀՀ ֆինանսական իրավունք» ուսումնական դասընթացի դասավանդման ընթացքում:

Ատենախոսությունում հեղինակը մանրամասնորեն ուսումնասիրության է ենթարկել վերաբերելի տեսական, օրենսդրական, տեղեկատվական նյութերը: Ընդ որում, ատենախոսը գնահատականի է արժանացրել մի շարք տեսական դրույթներ, որոնք պետք է ենթարկվեն ժամանակակից ըմբռնման և հստակեցման:

Ատենախոսությունը բաղկացած է երեք գլխից, որոնք ներառում են ութ ենթագլուխներ, որոնցում հեղինակը մանրամասնորեն վերլուծում է վերոնշված և այլ հարցեր՝ առաջարկելով հնարավորինս համապարփակ լուծումներ՝ այդ թվում օրենսդրության փոփոխության առաջարկներ և իրավակիրառ պրակտիկայում առաջացած հարցերի լուծման եղանակներ:

Այսպիսով, ընտրված թեմայի արդիականությունը, հետազոտության օբյեկտի և առարկայի ճշտությունը, նպատակները, տեսական և գործնական խնդիրներին առաջարկվող լուծումները, ինչպես նաև հետազոտության ունենալիք տեսական և կիրառական նշանակությունը կասկած չեն հարուցում:

Հետազոտության գիտական նորույթը պայմանավորված է նրանով, որ հայրենական իրավագիտության մեջ առաջին անգամ գիտական չափանիշներով վեր են հանվել պետական ֆինանսական վերահսկողություն իրականացնող մարմինների իրավական կարգավիճակի առանձնահատկությունները ֆինանսական վերահսկողության իրականացման գործընթացում՝ սահմանադրական բարեփոխումների և օրենսդրական նոր կարգավորումների խորապատկերում: Գիտական արժեք են ներկայացնում նաև վերը նշվածի համատեքստում գիտատեսական եզրահանգումների հիման վրա գործող իրավակարգավորումների կատարելագործմանն ուղղված մի շարք օրենսդրական փոփոխություններ կատարելու առաջարկությունները:

Գիտական նորույթը պայմանավորված է նաև պաշտպանության ներկայացված դրույթներով: Դրանց մեծամասնությունն արժանի է առանձնակի ուշադրության, մասնավորապես՝ «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքում դրույթի սահմանումը, ըստ որի, եթե պետական բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին Ազգային ժողովի որոշման նախագիծը չի ընդունվում և արդյունքում պետական բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվությունը համարվում է մերժված, ապա այն հետ է ուղարկվում ՀՀ կառավարություն առնվազն մեկ ամսյա ժամկետում վերացնելու հաշվետվությունում առկա անարժանահավատ, թերի կամ ոչ լիարժեք տեղեկատվությունը և կրկին այն ներկայացնելու Ազգային ժողով:

Հետազոտության տեսական և գործնական նշանակությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ աշխատանքում տեղ գտած տեսական եզրահանգումները կարող են նպաստել հետազոտության թեմայի վերաբերյալ տեսական պատկերացումների

ընդլայնմանը և հանդիսանալ տեսական աղբյուր՝ հետագա նմանատիպ աշխատանքների մշակման համար:

Բացի այդ, հետազոտության արդյունքների հիման վրա ներկայացված օրենսդրական առաջարկությունները կարող են կիրառվել ՀՀ ֆինանսական օրենսդրության հետագա մշակման ժամանակ, նպաստել իրավակիրառ պրակտիկայում առկա հիմնախնդիրների լուծմանը, ինչպես նաև օգտակար լինել թեմային նվիրված ուսումնական դասընթացների ընթացքում:

Ատենախոսության կառուցվածքը թույլ է տվել հեղինակին համակարգային, բազմակողմանի, ամբողջական և ճիշտ եղանակներով լուծել հետազոտության թեմայի վերաբերյալ առաջ քաշված խնդիրները: Աշխատանքը գրված է գրագետ, իրավաբանական լեզվով:

Ատենախոսության սեղմագիրն արտացոլում է հետազոտության հիմնական դրույթները, իսկ ՀՀ բարձրագույն որակավորման կոմիտեի կողմից հաստատված գիտական հրատարակությունների համար ընդունելի պարբերականներում հեղինակի հրատարակած թվով վեց հոդվածները բավարար չափով արտացոլում են ատենախոսության հիմնական արդյունքները:

Վերոնշյալի հետ մեկտեղ պետք է արձանագրել, որ աշխատանքում առկա են որոշակի նկատառումներ և դիտողություններ, որոնք հանգում են հետևյալին.

1. Ատենախոսությունում բացահայտելով ստուգաթերթի հիման վրա իրականացվող ստուգումների կարևորությունը և անհրաժեշտությունը, հեղինակի կողմից բավարար չափով չեն ներկայացվել ստուգաթերթերի կատարելագործմանը ուղղված առաջարկություններ, մինչդեռ աշխատանքում մեծ տեղ է հատկացվել պետական գնումների ոլորտում առկա հիմնախնդիրների լուծման ուղիների մշակմանը: Հաշվի առնելով, որ ստուգումների իրականացման արդյունավետությունը մեծապես պայմանավորված է ստուգաթերթում ընդգրկված հարցերի շրջանակից, գտնում ենք, որ նպատակահարմար կլիներ, եթե Հեղինակի կողմից արվեին նաև կոնկրետ առաջարկություններ ստուգաթերթում ընդգրկված հարցերի շրջանակը հստակեցնելու ուղղությամբ:

2. Ընդհանուր առմամբ համաձայնելով Հեղինակի դիրքորոշմանը պետական բյուջեի կատարման նկատմամբ խորհրդարանական վերահսկողության դերի առանձնացման և Ազգային ժողովի կողմից վերահսկողության լիարժեք իրացման սահմանման վերաբերյալ, գտնում ենք, որ առավել հիմնավորված կլիներ ոչ թե այն գիտական եզրահանգումը, որ

Եթե պետական բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին Ազգային ժողովի որոշման նախագիծը չի ընդունվում և արդյունքում պետական բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվությունը համարվում է մերժված, ապա այն հետ է ուղարկվում ՀՀ կառավարություն առնվազն մեկ ամսյա ժամկետում վերացնելու հաշվետվությունում առկա անարժանահավատ, թերի կամ ոչ լիարժեք տեղեկատվությունը և կրկին այն ներկայացնելու Ազգային ժողով, այլ առավել հիմնավորված ենք համարում այս դեպքում ՀՀ կառավարության կողմից բյուջեի կատարման տարեկան հաշվետվության հաստատման առնչությամբ իր վստահության հարցը դնելու կարգավորման սահմանման անհրաժեշտությունը: Որպես նման օրինակ պետք է նշել, որ նախկին «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքի 89-րդ հոդվածում սահմանված էին նման կարգավորումներ:

3. Հեղինակը Հաշվեքննիչ պալատի կողմից իր լիազորությունների պատշաճ և արդյունավետ իրականացումը ապահովելու նպատակով, հաշվի առնելով, որ որևէ իրավական հետևանք օրենսդրությամբ նախատեսված չէ, այն դեպքում, երբ առցանց տրամադրման անհնարինության դեպքում սահմանված ժամկետում Հաշվեքննիչ պալատին չի տրամադրվում անհրաժեշտ տեղեկատվությունը առաջարկել է ՎԻՎ ՀՀ օրենսգրքում լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր իրավախախտում՝ «Հաշվեքննիչ պալատին անհրաժեշտ տեղեկություններ և նյութեր չտրամադրելը, ինչպես նաև հաշվեքննության ընթացքին խոչընդոտելը»: Ողջունելի համարելով նման առաջարկության ներկայացումը, կարծում ենք, Հեղինակը պետք է տվյալ հարցին անդրադառնար համակողմանի այն համատեքստում, որ հաշվի առնվեր տվյալ արարքի համար նաև քրեական պատասխանատվություն սահմանելու անհրաժեշտության հարցի դիտարկումը կամ դրա սահմանումը:

Պետք է նշել, որ մատնանշված նկատառումներն ունեն մասնակի և խորհրդատվական բնույթ և չեն կարող ազդել Րաֆֆի Գագիկի Նալչաջյանի գիտական աշխատանքի ընդհանուր դրական գնահատականի վրա:

Ատենախոսությունը և սեղմագիրը պատրաստված են ներկայացվել պահանջներին համապատասխան, իսկ Րաֆֆի Գագիկի Նալչաջյանի կողմից հրատարակված հոդվածներում լիարժեքորեն արտացոլվում են ատենախոսության հիմնական դրույթները:

Ատենախոսության թեման ու բովանդակությունը համապատասխանում են ընտրված մասնագիտությանը:

Հետևաբար, Րաֆֆի Գագիկի Նալչաջյանի «Պետական ֆինանսական վերահսկողություն իրականացնող մարմինների իրավական կարգավիճակի

առանձնահատկությունները Հայաստանի Հանրապետությունում» թեմայով  
ատենախոսական հետազոտությունն իրենից ներկայացնում է արդիական, գիտական  
նորույթ պարունակող, տեսական և գործնական նշանակություն ունեցող ավարտուն,  
ինքնուրույն ուսումնասիրություն, որը ներառում է ֆինանսական իրավունքի տեսության,  
օրենսդրության, իրավակիրառման պրակտիկայի համար կարևոր նշանակություն ունեցող  
խնդիրների վերաբերյալ գիտականորեն հիմնավորված լուծումներ: Իսկ հետազոտության  
արդյունքները ֆինանսական իրավունքի գիտության ոլորտի համար ունեն մեծ  
նշանակություն:

Վերը շարադրվածը հիմք է տալիս եզրակացնելու, որ Րաֆֆի Գագիկի Նալչաջյանի  
«Պետական ֆինանսական վերահսկողություն իրականացնող մարմինների իրավական  
կարգավիճակի առանձնահատկությունները Հայաստանի Հանրապետությունում»  
վերտառությամբ ատենախոսությունը լիովին համապատասխանում է Հայաստանի  
Հանրապետությունում «Գիտական աստիճանաշնորհման կանոնակարգով» սահմանված  
պահանջներին, իսկ հեղինակն արժանի է ԺԲ.00.02 - «Հանրային իրավունք՝  
սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական,  
եվրոպական իրավունք, պետական կառավարում» մասնագիտությամբ իրավաբանական  
գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Ատենախոսությունը քննարկվել է ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և  
իրավունքի ինստիտուտի պետաիրավական հետազոտությունների բաժնի 2020 թվականի  
օգոստոսի «25»-ի նիստում, որին մասնակցել են բաժնի վարիչ, իրավաբանական  
գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հ. Մ. Ստեփանյանը, գլխավոր գիտաշխատող,  
իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գ. Հ. Սաֆարյանը, ավագ  
գիտաշխատողներ՝ իրավաբանական գիտությունների թեկնածուներ՝ Ա. Աբրահամյանը, Ա.  
Շուքուրյանը և Բ. Ղազինյանը:

**ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և  
իրավունքի ինստիտուտի պետաիրավական  
հետազոտությունների բաժնի վարիչ, իրավաբանական  
գիտությունների դոկտոր, պրոֆեսոր**



**Հ. Մ. Ստեփանյան**